ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«18» 03 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000026

Ձեռնարկողը՝ ***«Տավուշի ՃՇՇ» ՓԲԸ***
Տավուշի մարզ, ք. Բերդ, Գետափնյա 5

Գործունեությունը՝ ***Չինարիի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Տավուշի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Դոնոյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000026

«18» 03 2020թ.

Չինարիի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ներածական մաս.

Պատվիրատու՝	«Տավուշի ՃՇՇ» ՓԲԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/
Կից փաստաթղթեր՝	Նախագիծ, գրաֆիկական նյութեր
Գործունեության կատեգորիա՝	«Ա»
Տեղադրման վայրը՝	Տավուշի մարզ, Բերդ համայնք

«Տավուշի ՃՇՇ» ՓԲ ընկերության /այսուհետ՝ Ընկերություն/ կողմից Տավուշի մարզի Չինարիի ավազակոպճային խառնուրդի /ԱԿԽ/ հանքավայրում նախատեսվում է իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանում: Ընկերություն կողմից հանքավայրի շահագործումը նախկինում իրականացվել է ՇԱԹՎ-29/173 ընդերքօգտագործման թույլտվության շրջանակներում՝ N 173 լեռնահատկացման ակտի սահմաններում: Նույն տեղամասում ընկերության կողմից նախատեսվում է արդյունահանել ավազակոպճային խառնուրդի օգտակար հանածո և ստանալ նոր ընդերքօգտագործման թույլտվություն:

Չինարիի ավազակոպճային խառնուրդի հանքավայրը գտնվում է Տավուշի մարզի Բերդ համայնքի վարչական սահմանում, Չինարի բնակավայրից 1.7 կմ հյուսիս-արևմուտք, ՀՀ պետական սահմանից 1.5կմ հեռավորության վրա: Բուն հանքավայրի տարածքի բացարձակ բարձրությունների նիշերը տատանվում են 595-610մ սահմաններում: Հայցվող տարածը տեղադրված է Խնձորուտ գետի ողողահունում, զբաղեցնում է 2.25հա տարածք: Կուտակի ամբողջ տարածքով հումքի լրիվ կամ մասնակի արդյունահանումից հետո գետի բերվածքների կուտակման շնորհիվ կվերականգնվեն մարված պաշարները: Արդյունահանված ծավալները կարող են վերականգնվել մեկ տարեկան ցիկլում Խնձորուտ գետի հորդացման շրջանում, որը տևում է 2 ամիս (ապրիլի սկզբից մինչև մայիսի վերջ), արդյունահանման աշխատանքները դադարեցվելու են:

Հանքավայրի համար օտարվող տարածքը ներկայացված է ընդերքի օգտագործման համար տրամադրված հողատեսքով /վկ. N 21062013-11-0008 տրվ.21.06.2013թ./, ունի հաստատված պաշարներ: Հանքավայրի պաշարները հաստատվել են .ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի օգտակար հանածոների պաշարների գործակալության 24.11.2006թ.-ի N 116 որոշմամբ, ըստ C1 կարգի՝ 53.8 հազ.մ^3 ծավալով: Հաստատված պաշարները դասվել են վերականգնվող պաշարների շարքին՝ 1 միավոր վերականգնման գործակցով՝ 53.8հազ.մ^3/տարի, կամ 24.0 հազ.մ^3/հազ.տարի քանակներով: Նախագծված բացահանքի ծառայման ժամկետն ընդունված է 45 տարի:

Հանքավայրի օգտակար հանածոն հաստատվել են որպես հումք՝ շինարարական ավազի (ՀՍՏ ԳՈՍՏ 8736-95), կոպճի ու խճի (ՀՍՏ ԳՈՍՏ 8267-95) արտադրության համար:

Նախատեսված բացահանքը բնութագրվում է անկյունային կետերի հետևյալ աշխարհագրական կոորդինատներով /ARM WGS-84կոորդինատային համակարգով/.

1. Y=8547065 X=4526046
2. Y=8547055 X=4526143
3. Y=8547065 X=4526260
4. Y=8547135 X=4526321
5. Y=8547151 X=4526222
6. Y=8547144 X=4526119
7. Y=8547148 X=4526016:

Հանքավայրի տարածքը, գտնվելով Խնձորուտ գետի ամենամյա ողողման գոտում, զուրկ է հողային ծածկույթից ու բուսականությունից և ներկայացված է գետային ավազակոպճագլաքարային, կավաավազային բերվածքներով: Տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքների, կամ անտառային հողերի սահմաններում: Հանքավայրի տարածքում /Ընկերությանը հայցվող տեղամաս/ նախկինում կատարվել են ԱԿԽ-ի արդյունահանման աշխատանքներ, առկա են անհրաժեշտ ենթակառուցվածքները (բացահանքին մոտեցնող ճանապարհ):

ՀՀ Տավուշի մարզի Չինարիի ավազակոպճային խառնուրդի հանքավայրում «Տավուշի ՃՇՇ» ՓԲԸ կողմից ԱԿԽ-ի արդյունահանման համար նախագծված բացահանքը վերջնական դիրքում բնութագրվում է հետևյալ պարամետրերով.

- ամենամեծ երկարություն – 305մ,
- ամենամեծ լայնություն– 85մ,
- ամենամեծ խորություն – 3.1մ,
- օտարման տարածք – 2.25հա,
- օգտակար հանածոյի կորզվող պաշարներ – 2300.04 հազ.մ^3:

Պաշարների վերականգնման գործակիցն ընդունված է 1 միավոր:

Լեռնային աշխատանքների կազմակերպման և ավազների արդյունահանումն իրականացնելու համար յուրաքանչյուր տարի սեզոնի սկզբում անհրաժեշտ է կատարել հետևյալ լեռնանախապատրաստական աշխատանքները՝

- Մոտեցող բնահողային ավտոճանապարհի կարգաբերում՝ 2575մ^2 մակերեսում,
- Դրենաժային (ցամաքեցման) առվի կառուցում՝ բացահանքի հյուսիս արևելյան մասից (50մ երկարությամբ, 595մ^3 ծավալով),
- Արդյունաբերական հրապարակի կարգաբերում՝ 220մ^2 մակերեսում:

Հանքավայրի տարածքում մակաբացման ապարները և ցակույտային աշխատանքները բացակայում են:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ "ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER" SNCO
02543163
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

ԱԿԽ-ի արդյունահանումը կիրականացվի գետի աջ ափին զուգահեռ՝ գետից մեկուսացված խրամներով: Խառնուրդի արդյունահանման ընթացքում գետի բնական հոսքի ռեժիմը չխաթարելու և գետի ջրերը հնարավոր պղտորումից զերծ պահելու նպատակով գետի և խրամի միջև թողնվելու է 10-15 մ լայնությամբ բնամաս: ԱԿԽ-ի արդյունահանման աշխատանքները կատարվելու են դեպի ներքև շերեփման եղանակով՝ 1.6մ³ շերեփի տարողությամբ հակառակ բահով սարքավորված էքսկավատորով: Նախ կատարվում է օգտակար հանածոյի արդյունահանում և կուտակում օգտակար հաստաշերտի մակերևույթին՝ ջրազրկման նպատակով, որից հետո իրականացվելու է ջրազրկված օգտակար հանածոյի կույտի բարձումը սպառողների տրանսպորտային միջոցներ: Արդյունահանված ԱԿԽ-ի տեղափոխումը մինչև 35 կմ հեռավորության վրա գտնվող մշակման արտադրամաս կատարվելու է 20մ³ տարողությամբ ավտոինքնաթափով:

Համաձայն բացահանքի գլխավոր հատակագծի արտադրական հրապարակը նախատեսվում է բացահանքից դուրս ճանապարհի հարևանությամբ: Արտադրական հրապարակում նախատեսվում է տեղադրել շարժական տնակ, վագոն-հանդերձարան, ջրի և վառելիքի տարողություններ, կենցաղային կեղտաջրերի հեռացման անջրթափանց հոր:

Բացահանքում ջրամատակարարումը նախատեսված է արդյունաբերական հրապարակը խմելու ջրով ապահովելու, ինչպես նաև մոտեցնող ավտոճանապարհը և բացահանքը տեխնիկական ջրով ապահովելու համար: Փոշենստեցման մակերեսները կազմում են միայն ավտոճանապարհները, քանի որ բացահանքում հունամերձ ավազները մշտապես /նույնիսկ տարվա ամենաչոր ժամանակ (օգոստոսին)/ գտնվում են խոնավ վիճակում:

Խմելու ջուրը բացահանք է բերվելու ԱԲ-1.2 մակնիշի կցովի ջրի ցիստեռնով, իսկ տեխնիկական ջուրը՝ ԿՕ-002 մակնիշի ջրցան ավտոմեքենայով:

ՇՄԱԳ հաշվետվությունում գնահատվել է գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, մակերևութային հոսքեր, հողային ծածկույթ, բուսական և կենդանական աշխարհ/ և սոցիալական միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և ներկայացվել են ազդեցությունների կանխարգելմանն և նվազեցմանն ուղղված միջոցառումներ:

Բացահանքում վնասակար նյութերի արտանետումները կապված են աշխատող մեքենաների և սարքավորումների շարժիչների աշխատանքի հետ՝ պայմանավորված տարբեր տեսակի վառելիքի ծախսով: Իրականացվել են մթնոլորտային օդի աղտոտումից և հողային ռեսուրսին հասցվող տնտեսական վնասի հաշվարկներ: Արտանետումների քանակի նվազեցման նպատակով սարքավորումների վրա նախատեսված է վտանգավոր նյութերի չեզոքացուցիչների /կատալիտիկ ֆիլտրերի/ տեղադրում:

Հանքավայրի շահագործման ընթացքում բացակայում են գումարային ազդեցություն առաջացնող գործունեությունները, ընկերությանը պատկանող քարի մշակման և լվացման արտադրամասը գտնվում է բացահանքից 35 կմ հեռավորության վրա:

Հողային, ջրային ռեսուրսների /Խնձորուտ գետ/ պահպանության, ինչպես նաև շրջակա տարածքներում հնարավոր աղտոտումները կանխարգելելու նպատակով նախատեսված են հետևյալ միջոցառումները.

- վառելիքի և նավթամթերքների պահեստները տեղադրել գրունտային համակարգով բետոնապատ մակերեսների վրա՝ ջրածածկվող տարածքներից դուրս,

02543163 ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТНОЙ КОМИССИИ COMMISSION OF EXPERTS

- աշխատողների կենցաղային կարիքների համար տեղադրել անթափանց պատերով կեղտաջրերի հավաքման հոր՝ Խնձորուտ գետն աղտոտումից պաշտպանելու նպատակով,
- թափոնների առանձնացման և պատշաճ պահեստավորման աղբարկղերի /ներառյալ կենցաղային թափոններ/ տեղադրում համապատասխան վայրերում,
- տեխնիկա-տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման և ընթացիկ վերանորոգման իրականացում համապատասխան սպասարկման կայաններում, իսկ տեխնիկական միջոցների վառելանյութով լիցքավորում՝ լցակայաններում:

Գետի հոսքի, հատակի և ափերի պահպանությանն ուղղված հիմնական միջոցառում է հանդիսանում հանքավայրի շահագործման ընթացքում պաշտպանիչ բնամասի ապահովումը: Արդյունահանման ընթացքում, գետում ջրի որակական փոփոխություններ չեն կանխատեսվում, քանի որ արդյունահանված ավազը բացահանքում կուտակվելու է ժամանակավոր, լվացման նպատակով տեղափոխվելու է ՋՏԿ արտադրամասեր: Ընկերության կողմից նախատեսված է պարբերաբար իրականացնել տոպոգրաֆիական հանույթ և քարտեզագրական աշխատանքներ՝ նպատակ ունենալով ապահովել և հստակ սահմանագծով առանձնացնել պաշտպանիչ բնամասը:

Հանքավայրի լեռնատեխնիկական վերականգնումներն իրականացվելու են բացահանքում արդյունահանման աշխատանքների լրիվ ավարտից հետո: Բացահանքի մշակված տարածության լեռնատեխնիկական վերականգնում չի նախատեսվում: Նախագծով նախատեսվում է միայն արտադրական հրապարակի և ավտոճանապարհի ռեկուլտիվացիա՝ ընդհանուր 0.28հա մակերեսում, որի իրականացման ծախսերը գնահատվել են 430.8հազ. դրամ: Խախտված հողերի վերականգնման շրջանակներում նախատեսվում է իրականացնել նաև կենսաբանական վերականգնում՝ ավտոճանապարհի վերականգնված տարածքում, ջրածածկից դուրս տնկելով ծառեր:

Չինարիի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի շահագործման ընթացքում Ընկերության կողմից նախատեսված է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ /ներառելով՝ մթնոլորտային օդը, հողը, Խնձորուտ գետի ջրի մոնիթորինգը/, որի իրականացման նպատակով նախատեսվում է տարեկան տրամադրել 250.0 հազ.դրամ: Նախատեսված է նաև մարկշեյդերական դիտարկումներ վարարաջրերի ժամանակ մշակված տարածություն լցվող օգտակար նստվածքաշերտի պաշարները (դինամիկ պաշարները) քանակապես և որակապես հաշվելու և հսկելու համար:

Շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ պետք է մշակվի հանքի փակման վերջնական ծրագիր, որում կներկայացվի օգտակար հանածոյի շահագործման ավարտից հետո կատարվելիք բոլոր միջացառումների վերաբերյալ տեղեկատվությունը:

Պատճառաբանական մաս. շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության փուլերում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Բերդ համայնքում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Ստացված կարծիքներով և փորձաքննության արդյունքում առաջացած դիտողություններով՝ Ընկերության կողմից

ՀՀ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
02543463
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS
ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

կատարվել են ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումներ: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են ազգային անվտանգության ծառայությունը և պաշտպանության նախարարությունը:

ԱԿԽ-ի արդյունահանման աշխատանքներն իրականացնելիս Ընկերությունն առաջնորդվելու է ՀՀ օրենսդրության պահանջներով՝ պահպանելով գետի սանիտարական պահպանման տարածքները, գետի հունը, ափերը և հատակը: Այդ նպատակի համար ՇՄԱԳ հաշվետվությունում և նախագծում նախատեսվել են համապատասխան լուծումներ և միջոցառումներ, որոնց իրականացման շնորհիվ հնարավոր կլինի կանխարգելել Խնձորուտ գետի վրա հնարավոր ազդեցությունները: Միջոցառումներից կարևորվում են՝ շրջակա միջավայրի բաղադրիչների, ներառյալ՝ Խնձորուտ գետի որակական կազմի մշտադիտարկումները, ինչպես նաև՝ պաշտպանիչ բնամասի ապահովման նպատակով քարտեզագրական աշխատանքների կազմումը /ինչը նախատեսված է տարեկան մեկ անգամ՝ գետի վարարումներից հետո/: ՇՄԱԳ-ին կից փաստաթղթերում առկա է «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի դրական փորձաքննական եզրակացությունը:

Փորձաքննական պահանջներ

- Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում Խնձորուտ գետի սանիտարական վիճակի, հունի, ափերի և հատակի պահպանման նպատակով՝ որպես կարևորագույն միջոցառում, անհրաժեշտ է ապահովել ՇՄԱԳ-ում առաջարկված, վերոնշյալ մշտադիտարկումների իրականացումը և ժամանակացույցերը:
- Շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը՝ ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով, անհրաժեշտ է ներկայացնել լիազոր մարմին:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Տավուշի ՃՇՇ» ՓԲԸ կողմից ներկայացված Տավուշի մարզի Չինարիի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ Հ. Մկրտչյան